

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Ռ Ռ Ւ Ա Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Անստորագիր նամակներ Վարչաւայի և Սստուածածին եկեղեցու երեցփոխ Կորուկիվիչը շատ հետաքրքրական մանրամասն զեկուցումն ներկայացնելով եկեղեցու և հոգեորականութեան վերաբերեալ այլ և այլ ինչպինների մասին ընդհանութեամական պատգամաւորական ժողովին՝ ի միջի այլոյ ասել է. «Վերջին ժամանականերս չափագանց շատ տարածուած է ժողովրդի մէջ անստորագիր նամակներ և պասկուիլներ գրելու սովորութիւնը. Այդ անստորագիր նամակներով, դրդուած անձնական վրիժառութիւնից, դրաբարտում և անուանարկում են թէ միմեանց և թէ մանաւանդ իրենց հոգեսր հայրերին: Շատ ծխականների մէջ իրենց քահանայի վերաբերեալ այդ անստորագիր վարկաբեկող նամակների համաձայն քննութիւններ են կատարել: Խել մեր թեմում եւ ծուխ կան ևս ապրելով կաթոլիկների և բողոքականների մէջ՝ երբէք չեմ լսել որ անստորագիր նամակի համաձայն որ և է քննութիւն կատարէին կաթոլիկ քսէնզի կամ բողոքական պաստորի արարմանց մասին. աշխարհային պաշտօնական ատենաններում երբէք նշանակութիւն չեն տալիս անստորագիր նամակներին կամ պասկիլներին, իսկ հաշտարար դատաւորները մինչև անդամ ուշադրութեան չեն արժանացնում այն գանգատաւորի գաղտնի մատնութիւնները, որի խնդրի մէջ չէ նշանակուած զանգատաւորի կոչումը, տեղը և ասածները հաստատող վկաններ Անանուն նամակ գրողն չէ այն անանուն բարի անձն, որ կամենում է իւր անունը չտալով մէկին զգուշացնել գաւիք չարիքից կամ անզգուշութիւնից, այլ այն չար անձն է, որ իրեն թագիննելով, զիմում է իշխանութեան անստորագիր գրաւոր մատնութեամբ իւր մերձաւորին որ և է չարիք նիւթելու նպատակութիւն համարեած միջտ էլ ազդ անստորագիր նամակների համաձայն կատարած քննութիւնները ոչ մի դրական հետեւանք չին տուել, իսկ մինչդեռ զրանց հետքը մնում է ժողովրդի մէջ, իզուր տեղը վիշտ պատճառում այս կամ այն հոգեորական անձին, առաջ քերում գայթակղութիւն, իսկ այդ անստորագիր նամակ գրողներն էլ երբէք չեն խնայում ոչ հոգեորականի անձն և ոչ էլ նորա ըն-

տանիքի պատիւը: Մխականների յանձնաբարութեամբ յայտնուած եմ ժողովականներիդ, որ այդ անսառազիքի նամակների քննութեան գործը ծանր տպաւորութիւն է թօղնում բոլորի վրայ և իզուր տեղը արատաւորում այս կամ այն հոգեորականի կամ աշխարհականի պատիւը: Մենք աշխարհականներս ի նկատի առնելով այդ անստորազիքի նամակների վնասակար դերը աշխարհական և հոգեորական անձանց վերաբերեալ, խնդրում ենք թեմական ժողովից որոշումն կայացնել ամեն կերպ կռուել այդ վատ ախտի դէմ՝ նշանակել քարոզիչներ յատկապէս եկեղեցու թեմից աշխարհական անձանց խրատելու թօղնել այդ տգեղ սովորութիւնը՝ բնարան ընտրելով Աւետարանի հետեւալ խօսքերը. «Մի զաք խուիցէք և մի զոք զրպարտիցէք...» Դուկաս Գ—14.»

Դժբախտաբար այդ վնասակար ախտն անստորազիքի նամակներով զրտաբատել, վարկարնեկել և չարութիւն նիւթել, կան նաև հայերիս մէջ՝ մանաւոնդ գաւառական քաղաքներումն Ամեն սըրբութիւն ստըի տակ են տալիս այդպիսինները և ամենաստոր միջոցներով վրէժինդիքի լինում մէկը միւսից:

Կեզծ կամ անստորազիքի նամակներով աշխարհականները միմեանց ընտանիկան պատիւ են արատաւորում, մատնութիւններ անում, այս կամ այն հոգեորականին վարկաբեկում և այդպիսով ստեղծում մի դժոխային կեանք շրջապատի համար: Քանի քանի մարդիկ զո՞ն են զնացել այդպիսի ստոր մատնութիւնների, կամ բարոյապէս գոնէ առժամանակ տուժել: Ցաւ ի սիրտ պէտք է խոստովանի, որ մեղանում այդպիսի ստոր հերոսներ երեան են եկել ոչ միայն աշխարհականների մէջ՝ այլ նաև հոգեորականների մէջ՝ որոնք ընդհակառակն իրենք պէտք է այդպիսիններին ուղղիչ և խրատող հանդիսանային: Ի՞նչ կարելի է անել, հարկաւ մնում է եկեղենակաւոր հոգեորականներին որ մեր եկեղեցու թեմից ևս կռուեն այդ շափականց ստոր վնասակար ախտի դէմ, իսկ բանիմաց գատաւորներն էլ թող ուշադրութիւն շդարձնեն այդպիսի զրպարտիչների զրութիւններին, որով մնէ չափով կըմեռցնեն նոցա եռանդը այդ ախտը տարածելու գործում:

Հոգեւորականներին ունիլի նեանակելու մասին: Խուսաց ծիառ կան հոգեորականութիւնն ապահովեցնելու հարցը հերթական է դարձել և զրագեցնում է շատերին: Արդէն որոշուած նպաստի քանակութիւնը (100 ո. մինչև 300 սուրլի քահանային) չէ զոհացնում հոգեորականութեանը և չէ թեթեացնում ծխի հոգեորականներին պահելու ծախքը: 1914 թ. նախահաջուի համաձայն պահան-

ջւում է Պետական գանձարանից համարեա 18 միլիոն ռուբլի, հաշվառկ անցեալ տարուայ 2^{1/2} միլիոն պահանջի, և չնայած դորան 9,000 ծուխից աւելի նպաստ չեն ստանում զանձարանից, 1905 թ., 38 հազար ծխից զանձարանից նպաստ ստացել են 27,412, այսինքն 720/₀, Մինչեւ 1913 թ. յունիս 1-ը ընդհանուր ծխի 41,270 թուխց նպաստ ստացողներ եղել են 31,476 կամ 760/₀, այդպիսով 8 տարուայ ընթացքում նպաստ ստացողների թիւը աւելացել է միայն 40/₀-ով, այսինքն իրաքանչիւր տարի 4/2-ական, իսկ նշանակուած գումարի չափը աճել է 11,8 միլիոն ռուբլուց (1905 թ.) մինչեւ 15,2 միլիոն ռուբլի (1913 թ.).

Չնայած մեծ քանակութեամբ զանձարանից նպաստ ստանալուն՝ գործի բարելաւումն դանդաղ էր ընթանում, անշուշտ այդ բացարձում է նրանով, որ մի կողմից էլ ծխների թիւը հետզհետէ շատանում էր Վերջին տասն տարին միջին թուով իրաքանչիւր տարի աւելացել է 71 ծուխ, 1910—12 թուականները ծխների թիւը աւելացել է 271-ական։ Բայց և այնպէս հոգեորականների նիւթական գրութիւնը մինչեւ այժմ չէ բարելաւուած և կարօտ է կանոնաւոր բարեզրմանն

Մեծն Պետրոսի ժամանակ 1765 թուին առանձին վճար է եղել սահմանուած հոգեորականների ծխսակատարութեանց համար հետևեալ չափով, ձևողկանի մօտ աղօթք կարգալու համար 2 կոպ., երեխայի մղբտութեան համար 3 կոպ., հարսանիքի 10 կ., հասակաւորների թաղումը 10 կ., իսկ փոքրներինը 3 կ., խօստովանութեան և ա. հազորդութեան համար ոչինչ չվերցնել։ 1801 թ. այդ չափը դնահատութեան կրկնապատկուած էր 1828 թ. բարձրագոյն հրամանով որոշուել է աղքատ տեղերի հոգեորականութեան նպաստ տալ և ամբողջ Ռուսաստանի հոգեորականութեան աղքատ մասին նպաստ տալու համար յատկացրել են 142 հազար ռ։ 1842 թ. սկսած երբ որոշուել է տաս (քանանային 100—180 ռուբ., իսկ սազմուասածին 40 ռուբ. տարեկան) ոռնիկների աւելացումն եղել է կանոնաւոր և 20 տարուց յետոյ պետական նպաստի չափը հասել է 3,727,987 ռուբլի։ Այն ժամանակուայ ընդհանուր 37,000 ծխական հոգեորականների թուից ոռնիկ ստացել են 17,715 հոգի։

1910 թ. ս. Մինօդում կազմակերպուել է առանձին խորհուրդ, որն որոշել է բարձրացնել քահանաների ոռնիկն տարեկան մինչեւ 1200 ռ. քչացնելով շտատնի դալիբների թիւը 4,000-ով։ Բայց յետոյ ս. Մինօդը յանգել է այն եզրակացութեան, որ գործը այդ ձեռվ կը ձգնագուի մինչեւ 10 տարի, ուստի որոշել են նախկին կարգով ընթանալ և զանձարանից 600 հազար ռուբ. փոխարէն ինդրեն տարեկան 1^{1/2} միլիոն ռուբլի։

Վերջապէս Պետական Դուման ի նկատի առնելով այդ ամենը՝

և կամենալով վերջ դնել երկար տարիների ընթացքում հոգեսոր իշխանութիւնը և պետութիւնը զբաղեցնող այդ կնճռոտ խնդիրն առել է իւր ձեռքը օրէնադրական եղանակով որոշումն կայացնելու և ստիպելու հոգեսոր իշխանութեան պարզ կերպով յայտնելու իւր հայեցքը՝ թէ կամենում է արգեօք ապահովել հոգեսորականութիւնը և ինչ կերպով:

Այդ տևակէտացի հոգեսորականութիւնը ապահովեցնելու համար Պետական Դուման է մտցրուած չորս նախադիմիք: Աջակողմեանների նախագծով հոգեսորականների ապահովեցման գումարը, անկախ ծխիքարեփոխութիւնից, ամբողջապէս պէտք է տրուի պետական գանձարանից: Այդ նախագիծն ունի հետեւել յօդուածները:

1. Միական հոգեսորականները ստանում են ապրուստի միջոց 1) տեղական ազրիւններից, ա) վճար ոչ պարտադիր հոգեսոր պէտքերից և բ) ելեղեցական-հոգեսորականութեան հոգերի եկամուտից, կապալադրամներից, և այն գումարի առկաններից, որոնք որոշուած են հոգեսոր դամի պահպանութեան համար, 2) պետական գանձարանի միջոցներից, քահանան 1,200 ռուբ. տարեկան, շտամնի սարկաւագը քաղաքային հասոյթներից 600 ռ. իսկ սաղմոսասածը 400 ռ.

2. Այս օրէնքը հաստատելու առաջին տարին պիտօքական գանձարանի միջոցներից տրուում է ծխական հոգեսորականութիւնը պահպանելու համար ապատիկ այն չափով, որ բոլոր թեմերի հոգեսորականները կարողանան ստանալ, քահանան ոչ պակաս քան 300 ռ. տարկաւագը 150 ռ. և սաղմոսասածը 100 ռուբ. Երկրորդ տարին ապատիկ տրուում է այնպիսի չափով, որպէսզի քահանան ստամայ 600 ռ. սարկաւագը 300 ռ. և սաղմոսասածը 200 ռ. իսկ երրորդ տարին կանոնաւոր ոսճիկ, քահանան 1200 ռ. սարկաւագը 600 ռ. սաղմոսասածը 400 ռ:

3. Երբ կանոնաւոր չափով ոսճիկ կըստանան, հոգեսորականները ձրի կատարում են բոլոր պարտադիր հոգեսոր պէտքերը, այսինքն եկեղեցու բոլոր խորհուրդները, որոնք կատարում են Եկեղեցում, իսկ դրանում թաղումը և հիւանդին ուղեկցելը տուն:

4. Նոր հաստատուած հոգեսորական դասի համար փող լիբնդրում է օրէնքագրական եղանակով:

5. Կենսաթոշակ տրուում է հետեւել չափով՝ քահանային 900 ռ. սարկաւագին 450 ռ. և սաղմոսասածին 300 ռ. Արիւ կենսաթոշակ տրուում է 35 տարի ծառայածին, $2/5$ -ը 30 տարի և $3/5$ -ը 20 տարի ծառայածին:

6. Սահմանուում է հանել պետական ոսճիկ ստացողից $20/0$ թոշակարկղի օպաֆին:

Մի ուրիշի առաջարկած նախագծի մէջ ՅՅ-րդ յօդուածուէ

նրոցուած է. «Ճիշտական հոգեորականներն իրենց աշխատավայրձի համար ստանուամ են ա) ապրուաթի միջոց ծխից բ) ոչ պարտադիր կատարած օրէնքների համար վճար, եկեղեցու հոգից իւր արամացրութեան տակ արուած մասից արդիւնք, նոյնական և բնակարան»։ Միի հոգեորականներն առուած ապրուածի միջոցը, նոյնապէս հոգի քանակը և բնակարան, նշանակուած հոգեորականների բնակութեան համար, որոշուամ է հոգեօրականի ծառայութեան մտած օրից ծխականների կողմից, այն պայմանով որ վարձադրութիւնը՝ նշանակուած քահանային՝ պակաս չինի 900 ոուրից, սարկաւագին 450 ռ, սազմուասածին 300 ռ. իսկ հոգամասը և բնակարան բառ օրէնքի որոշուած չափին լրաքանչիւր երեք տարուց յետոյ ծխականները՝ համաձայն հոգեոր հայրերի ծառայութեան՝ կարող են աւելացնել նոցա վարձադրութիւնը՝ մինչև որ առառաւելը դիւզական քահանաների ոունի կը հասնի 2400 ռ, առրկաւագինը՝ 1200 ռ, և 600 ռ, սազմուասածինը՝

Բարձրագոյն հրամանով հաստատուած է Պետական Դումայի սրբութեամբ Պետական գանձարանից տալ առն 1914 թ. ընթացքում 30,000 ոուրից Աւրմիայում Աւզգափառ հոգեորականներն ապահովանութեան համար։

Ա. Սինօղը հաստատել է Աւատամանական Յանձնաժողովի մշակած Մոսկուայի Սինօդական ուսումնարանի երգեցողութեան ծրագիրը։ Այդ ծրագրով Աւատամանը դաշնութ է բարձրագոյն մասնագիտական հոգեոր մուգիկայի գորոց։ Այդ գորոցը պէտք է տայ միջնակարգ զարոցներին մուգիկայի ուսուցիչներ և եկեղեցիներին էլ երգեցիկ խմբի զեկովարներ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

1913 թ. Աւատրիայում մեծ քանակութեամբ անցել են աւետարանական եկեղեցու ծոցը, 1912 թ. անցել են 4867 հոգի, 1913 թ. 4720, որից 4,159 հոգի հասէկական-կաթոլիկ եկեղեցուց, իսկ 561-ը միւս զաւանութիւններից։ Իսկ նոյն 1913 թ. ընթացքում դուրս են եկեղեցական աւետարանական եկեղեցուց 1,612 մարդ, որից 1,204 հոգին անցել է հասէկական-կաթոլիկ եկեղեցու ծոցը,